ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճընն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճընն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2024 թվականի N 95-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Նոր Հաճընն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1.Օտարել.

1) Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող բնակելի, հասարակական, արտադրական և այլ նշանակության շինությունների, ինչպես նաև ավտոտնակների պահպանման ու սպասարկման համար առանձնացված այն հողամասերը, որոնց նկատմամբ գրանցված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց վարձակալության կամ օգտագործման իրավունքը, բացառությամբ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի:

2) Հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերի հիմքով ձեռք բերված հողամասերը, բացառությամբ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի:

3) Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց պատկանող գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման ժամանակ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված, սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափից փաստացի ավել օգտագործվող հողամասերը, բացառությամբ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված այն հողամասերը, որոնք ներառված են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված ցանկում, առանց մրցույթի, վարձակալության իրավունքով տրամադրել դրանց նկատմամբ օրենքի ուժով օգտագործման իրավունք ունեցող քաղաքացիներին կամ

իրավաբանական անձանց՝ տվյալ հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափին հավասարեցված տարեկան վարձավճարով:

3. Սահմանել, որ սույն որոշմամբ նշված հողամասերն ուղղակի վաճառքի կարգով, գնման նախապատվության իրավունքով, դրանք տիրապետող անձանց օտարման կամ վարձակալության տրամադրման գործընթացներն իրականացնում է Նոր Հաճըն համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11

Դեմ -1

Ձեռնպահ -6

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ՄԵԾՈՅԱՆ ԳՈՌ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՊԱՊՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**